ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԳԱՄԸ ՓԱՐԻԶՈՒՄ ՈՂՋԵՐԹԻ ՄԵԾ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ (7 հունիսի 1979 թ.)

Այսօր, 7 հունիս 1979, պատմական օր մը եղաւ Մայր Աթոռ ս. Էջմիածնի ու նաև ֆրանսահայ համայնքի համար, որովհետև այսօր կեսօրէ հետո, ժամը 5-ին, Հայոց Հայրապետը պաշտօնապէս ընդունվեցաւ Էլիզէ պալատ, Ֆրանսայի հանրապետության նախագահ, մեծահարգ Վալերի Ժիսկար դ'Էստենի կողմէ, բացառիկ շուքով և պատիվներով: Ձեր հանրապետության նախագահը ցանկացաւ Հայոց Հայրապետի հետ անձամբ տեսակցիլ, չորս աչքի մէջ, և մեր տեսակցությունը պաշտօնական տեսակցություն մը ըլլալէ աւելի, դարձաւ կարծեք մտերիմ, բարեկամական զրույց մը, որ տևեց 50 րոպէ: Մեծահարգ նախագահը նախ հետաքրքրվեցաւ մեր եկեղեցվո ծագման, կազմակերպման և արդի կյանքի հարցերով: Ապա կամեցաւ աւելին գիտնալ հայ ժողովուրդի ծագման ու կազմավորման մասին և հայ լեզվի մասին: Մոտ կես ժամ գրեթէ այս եղաւ մեր զրույցի նյութը: Ապա Մենք խոսեցանք Մեր այցելության մասին, ընդգծելով մանավանդ, թե ինչպիսի ուրախության պահեր ապրեցանք, հանդիպումներ ունենալով տարբեր քաղաքներու թե՛ նահանգապետներու և թե՛ քաղաքապետներու հետ: Հանրապետության նախագահին Մեր խորազգաց շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնեցինք հանդեպ ֆրանսական պետական իշխանություններուն, որոնք ամեն տեսակի դյուրություններ և նպաստավոր պայմաններ կընծայեն, որպեսզի մեր եկեղեցվո հավատացյալները ֆրանսայի

մեջ կարողանան կազմակերպել իրենց կյանքը հայ համայնքներու մեջ, կրոնական, կրթական և մշակութային գործունեությամբ, մնալով միաժամանակ հավատարիմ և գործարար քաղաքացիները Ֆրանսական հայրենիքին: Եվ ինչպես նախորդ նախագահները, որոնք Մեզ ընդունեցին անցյալի մեջ, այս անգամ ևս մեծարգո նախագահը գոհունակությամբ արտահայտվեցավ Ֆրանսայի մեջ ապրող հայերու մասին, իբրև կարգապահ և շինարար քաղաքացիները այս հայրենիքին, ինչ որ Մեր հոգին անշուշտ հպարտությամբ լեցուց, որովհետև Հայոց Հայրապետի համար բացառիկ հոգեկան մխիթարություն է հաստատել այն իրողությունը, թե սփյուռքի տարածքի վրա միշտ և ամեն տեղ, մեր ժողովուրդի զավակները կմնան հավատարիմ, օրինապահ քաղաքացիները իրենց բնական երկրին:

Բայց մեր զրույցը ավելի ընդարձակվեցավ: Նախագահը հետաքրքրվեցավ նաև Երուսաղեմի ս. Տեղյաց հարցով, և Մենք ներկայացուցինք այսօրվան վիճակը, վեր հանելով կարևոր դիրքը, զոր ունի այնտեղ Հայաստանյաց եկեղեցին, այսինքն՝ հայոց պատրիարքությունը ս. Տեղյաց մեջ: Հետո ակնարկ եղավ բնական կերպով Լիբանանի այսօրվան ողբերգական կացության, որու հետևանքով կտառապին բոլոր համայնքները, նաև մեր հայ համայնքը: Բնականաբար Մենք հայտնեցինք Մեր մաղթանքը, որ շուտով խաղաղությունը վերահաստատվի երբեմնի դրախտանման այդ երկրին մեջ:

Ապա պարտականություն նկատեցինք ձեր բոլորի անունով և մեր ամբողջ ժողովուրդի անունով Մեր շնորհակալությունը և երախտագիտությունը հայտնել մեծարգո նախագահին, որ երկու ամիսներ առաջ, երբ Միացյալ Ազգերու Կազմակերպության համապատասխան հանձնաժողովի նիստի ընթացքին քննարկված է ծանոթ 30-րդ հոդվածը, նաև Ֆրանսայի հանրապետության ներկայացուցիչը ուժգին կերպով պաշտպանած է հայոց արդար առաջադրանքը, որ հայ ժողովուրդի դեմ ի գործ դրված 1915-ի ցեղասպանությունը ճանաչում ստանա միջազգայնորեն, Միացյալ Ազգերու Կազմակերպության հաստատումով:

Այսպես անա լավագույն տպավորություններով բաժնվեցանք մեծահարգ ձեր նախագահեն: Թող Աստված միշտ խաղաղության, հառաջընթացի և ծաղկումի մեջ պահե այս մեծահոգի երկիրը՝ Ֆրանսան, որպեսզի նաև հետ այսու ևս շարունակե մնալ աշխարհի մեջ ջահակիրը քաղաքակրթության և բարոյական մեծ արժեքներու:

Այսօր Մենք պարտք կզգանք եղբայրական Մեր անկեղծ գոհունակությունը հայտնելու մեր սիրելի Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանին, որ մտահղացումը ունեցավ այս այցելության և կազմակերպողը եղավ ծրագիրներու գործադրման, իր կողքին ունենալով եկեղեցական վարչությունը, իր կողքին ունենալով ժրաջան և անհոգնաբեկ Գյուտ եպիսկոպոս Նագաշյանը և մյուս բոլոր մարմինները, որոնք այս առիթով օժանդակեցին Մեր ուղևորության հաջողությանց: Մեր գնահատանքի խոսքը նաև մյուս շրջաններու Մեր հոգևոր եղբայրներուն՝ տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյանին՝ Մարսիլիո շրջանին համար, տ. Դավիթ եպիսկոպոսին՝ Լիոնի շրջանին համար, և բոլոր հոգևոր սպասավորներուն ու եկեղեցական մարմիններուն, որոնք բոլորը իրենց առավելագույնը ի գործ դրին: Մեր գոհունակությունը նաև բոլոր այն կազմակերպություններուն, միություններուն, որոնք Մեզ ողջունեցին այս կամ այն առիթներով, նաև Փարիզի հայ մամուլին և հրատարակչություններուն, որոնք օրը օրին արձագանքեցին Մեր գործունեության: Բոլորին Մեր շնորհակալությունը և օրհնությունը:

Մեր ջերմ գոհունակությունը կուզենք հայտնել նաև քույր եկեղեցիներու բարձրաստիճան ներկայացուցիչներուն, որոնք եղբայրական սիրով, գրկաբաց ընդունեցին Հայոց Հայրապետին: Հատկապես երախտապարտ ենք կաթոլիկ եկեղեցվո սրբազան արքեպիսկոպոսներուն և եպիսկոպոսներուն, նաև մեր հայ կաթողիկե համայնքի առաջնորդ Գերապայծառին և հայ ավետարանական եկեղեցվո ներկայացուցիչներուն:

Այս հանդիսավոր առիթով Մենք պարտինք նաև Մեր խորին շնորհակալությունը հայտնել մեր երկրի մեծ դեսպան մեծահարգ տիար Զերվոնենկոյին, որ Մեզ այնքան ջերմորեն ընդունեց և հյուրասիրություն կազմակերպեց ի պատիվ Մեր պատվիրակության: Պիտի խնդրեինք այստեղ ներկա եղող պարոն Ռուբեն Սահակյանեն, առաջին քարտուղարը սովետական դեսպանության, որ պատեհ առիթով անգամ մը ևս ներկայացնե մեծ դեսպանին Մեր հարգանքի հավաստին և Մեր լավագույն սրտաբուխ մաղթանքները:

Հիմա թույլ տվեք շարունակել Մեր զրույցը: Բայց ինչի՞ մասին խոսինք ձեզի: Այս հարցումը Մենք Մեզի կուտանք ամեն անգամ, երբ բազմամարդ հանդեսի մը կամ հավաքույթի մը առջև կգտնվինք: Կխորհինք, թե այս ժողովուրդը ի՞նչ կսպասե Մեզմե, որպեսզի Մեր խոսքը շահեկան և հաճելի ըլլա բոլորին: Այս հարցումը այս պահուս Մեր մտքին մեջ նորեն կշարժի:

Այսօր կուզեինք քանի մը մտքերու շուրջ ամփոփել Մեր ըսելիքը, իբրև հորդոր, եթե կուզեք՝ իբրև պատգամ: Արդ, Մեր առաջին հորդորը պիտի ըլլար՝ հրավեր մը ձեզի բոլորիդ ուղղված, և բոլոր հայերուն, որոնք կապրին ֆրանսական հողին վրա, որ հավատարիմ մնան մեր Մայր եկեղեցվույն, Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվույն, որ սփյուռքահայ կյանքի ողնաշարը կհանդիսանա երեկ, այսօր և վաղը: Ուրիշ առիթներով ալ ընդգծեցինք և հիմա ալ կուզենք ընդգծել, թե Մենք բնավ չենք ստորագնահատեր այլ կազմակերպությունների գոյության իմաստը: Կընդունինք, որ ամեն կազմակերպություն կամ միություն իր տեղը ունի և իր ընելիքը, և հետևաբար իր գոյության իմաստը՝ առավել կամ նվազ չափով: Սակայն բոլոր հայ կազմակերպությունները ունին տեղական, մասնավոր և հատվածական բնույթ: Հատվածական բառը կօգտագործենք ոչ բացասական իմաստով: Այն միակ կազմակերպությունը, սակայն, որ ամբողջ հայությունը կհամախմբե իր հովանիին տակ առանց բացառության, անխտիր կերպով, այդ Աստուծմե մեզի շնորհված Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին է, որ մոտ երկու հազար տարիներե ի վեր կա և կմնա անսասան, ոգեղեն Արարատի մը նման: Ոչ մեկ տատանումի չենթարկվիր եկող և գացող հովերեն: Կմնա միշտ ինքն իրեն նման, միշտ ինքն իրեն հավասար, միշտ ինքն իրեն հավատարիմ, միշտ նույն առաքելության ճանապարհին վրա, իբրև մեր ազգի հոգևոր, բարոյական և մշակութային կյանքը ձևավորող, խմորող և պայծառակերպող ուժականություն: Կար ժամանակ, երբ կթվեր ոմանց, թե Հայաստանյայց եկեղեցին, Հայաստանի մեջ նվազ չափով կկարողանա իրագործել իր առաքելությունը: Սակայն ժամանակները փոխվեցան, և բնական է այդ: Ամեն հեղափոխություն հետո նման երևույթներ տեղի կունենան, բայց տակավ ամեն ինչ իր բնական հունին մեջ կմտնե: Այսօր մեր սուրբ եկեղեցին նույն իր պատմական առաքելության ճամփուն վրա կգտնվի, սուրբ Էջմիածնի գլխավորությամբ: Եվ ասիկա, մեր պետական իշխանությանց բարյացակամ տրամադրություններուն ներքև: Այսօր իրապես Հայաստանի մեջ եկեղեցիին ծուռ նայող մարդ գոյություն չունի:

Բոլորը կհարգեն եկեղեցին, ս. Էջմիածինը: Ոմանք կրնան հավատացյալ չըլլալ, այդ ուրիշ հարց է, անձնական խղճի հարց է: Եվ ամեն մարդ ազատ է, իր խղճի և աշխարհայացքի համաձայն, հավատացյալ ըլլալու կամ չըլլալու. կարևորը այն է, որ փոխադարձ հարգանք ըլլա, սկզբունք, որ արձանագրված է նաև մեր երկրի սահմանադրության մեջ: Եվ իբրև քրիստոնյաներ, մեզի համար ամեն ոչ հավատացյալ թեկնածու մըն է հավատացյալ ըլլալու օր մը ապագային:

Սիրելի ժողովուրդ, մենք Հայաստանյայց եկեղեցիին պետք է մոտենանք լրջությամբ, պատմական գիտակցությամբ և պատասխանատվության զգացումով: Մանավանդ մենք՝ հոգևորականներս: Քանի որ մեր եկեղեցին իր պատմական առաքելության մեջ կգտնվի, և քանի որ մանավանդ սփյուռքի պայմաններուն մեջ մեր ամբողջ հայ կյանքի ողնաշարը մեր ազգային եկեղեցին կհանդիսանա, ուրեմն կհետևի, թե հոգևորականներուս պարտականությունները ավելի կծանրանան մեր ուսերուն վրա: Մենք ավելի պատասխանատվություն ունինք, հետևաբար, և ավելի ընելիք, քան թե մինչև հիմա կընենք: Դժբախտաբար մենք տակավին չենք հասած, մեր հոգևորականության շարքերով, այդ մակարդակին, ո՛չ քանակական և ո՛չ ալ որակական առումով: Մեր այս դատողությունը կվերաբերի ընդհանրապես մեր եկեղեցիին՝ սկսելով Մայր Աթոռեն: Մենք պետք է ձգտինք մեզ սրբագրել, մեզ կատարելագործել և հետզհետե հասնիլ՝ քանակով և որակով այն աստիճանին, որ կարողանանք մեր պատմական հոգևոր ու ազգային առաքելությունը առավելագույն չափով հաջողությամբ հառաջ տանիլ:

Ցավով պետք է հաստատենք, թե հայ սփյուռքը մնայուն երևույթ է այլևս: Կարող են հետագային հնարավորություններ ստեղծվիլ նոր ներգաղթներու, Մենք առաջին աղոթողը և ուրախացողը կըլլանք իբրև Հայոց Հայրապետ: Եվ հավանական է, որ նման ներգաղթներ կազմակերպվին հետագային, բայց զանգվածային իմաստով, մեր ամբողջ արտասահմանի երկու միլիոն ժողովուրդը՝ Արևելքեն, Եվրոպայեն, Ամերիկաներեն կխորհինք թե հնարավոր չըլլար տեղափոխել մայր հայրենիք: Հետևաբար միշտ պիտի ունենանք սփյուռք և այդ գաղափարեն պետք չէ վախնանք, պետք չէ հուսահատինք: Ընդհակառակը, ճակատագրի մեր առջև դրած այս հարցը, այս նետված ձեռնոցը պետք է քաջությամբ ու պատվով վերցնենք և մեր կյանքը կազմակերպենք ամուր, տևական հիմքերու վրա, այսօր, վաղը և հետագա տասնամյակներուն: Նույնիսկ, եթե կուզեք, այս աննպաստ պայմաններեն մենք կրնանք օգուտ քաղել այսօրվա մեր վերածնած Հայաստանի համար: Որով, լավատեսությամբ և ինքնավստահությամբ պետք է աշխատինք սփյուռքի հայության կյանքը ավելի ամուր հիմերու վրա խարըսխելու: Եվ թույլ տվեք անգամ մը ևս ընդգծել, թե ամենաամուր, ամենապահով, ամենափորձված այդ խարիսխը, որուն վրա կրնա հիմնվիլ կառույցը արտասահմանի համայն հայության այսօր, կա ու կմնա՝ Հայաստանյայց առաքելական մեր Մայր եկեղեցին: Եվ այս կըսենք ոչ միայն իբրև կաթողիկոս, ոչ իբրև հոգևորականի նախասիրություն, այլ որովհետև առարկայական իրականությունը այդ է: Հայ առաքելական եկեղեցին ինքնագլուխ, ինքնավար և անկախ այն միակ հաստատությունն է, որով արտասահմանի մեջ մենք հայ ենք հաչս պետական իշխանությանց: Հայաստանյայց եկեղեցին է, որ մեր հայկականությունը կապահովե իրավական տեսակետով, հյուրընկալ պետությանց օրենսդրության ոգիով:

Մենք, մեր ուժերով, Մեզմե սկսյալ, կաշխատինք և պիտի աշխատինք

մեր պարտքը կատարել այս տեսակետեն, գործակից ունենալով արտասահմանի մեր գիտակից հոգևոր եղբայրները, ինչպես օրինակ՝ ձեր առաջնորդ և հայրապետական պատվիրակ Սերովբե սրբազանը, որոնք այս ոգեշնչումով կառաջնորդվին: Մենք հետզհետե մեր ուժերը պետք է լարենք, որպեսզի մեր եկեղեցին, ս. Էջմիածնով և նվիրապետական մյուս երեք Աթոռներով, ավելի ու ավելի արդյունավետությամբ կազմակերպե մեր ժողովուրդի ինքնապահպանումը և գոյատևումը, թե՛ հոգևոր, թե՛ կրթական և թե՛ ազգային իմաստով:

Երկրորդ Մեր հորդորը պիտի ըլլար՝ հնարավոր չափով կենդանի պահել մեր մայրենի լեզուն: Ոգեղեն ճարտարապետական կոթող մըն է մեր մայրենի լեզուն, և՛ գիտական, և՛ գրական և թե՛ քրիստոնեական տեսակետներե: Հետևաբար պետք է աշխատինք կրթական գործը կազմակերպել անհահանջ եռանդով, եկեղեցվո միջոցավ, եկեղեցվո շուրջ, կամ այլ կազմակերպությանց հովանիին ներքև, ինչպես՝ Հայ Բարեգործական Ընդհանուր Միության և Մխիթարյաններու, որոնց դպրոցները նախախնամական դեր կկատարեն մեր օրերուն: Հայ լեզվի պահպանումը կենսական, վճռական նշանակություն ունի արտասահմանի հայության գոյատևման համար: Եվ հավատացեք նաև, որ արտասահմանի ամեն հայ դպրոց, լավագույն ընծան է պարգևված Հայաստանին: Պիտի ցանկայինք, որ սփյուռքի Մեր զավակները սրբությամբ մոտենային մեր մայրենի լեզվին, մեր աղոթքի լեզվին, մեր նահատակներու լեզվին, մեր հերոսներու լեզվին, մեր վերածնած Հայաստանի պետական լեզվին:

Երրորդ խորհուրդ մը, զոր կկամենայինք տալ, այդ կվերաբերի արտասահմանի հայության Ներքին միության, ներքին միասնության, գոնե եկեղեցական-հոգևոր մակարդակի վրա: Այո՛, միասնություն եկեղեցիով, ս. Էջմիածինով, որ գլուխն է և պատմական կեդրոնը և վերին հեղինակությունը մեր սուրբ եկեղեցվո: Մահու կենաց խնդիր է մեզի համար այս միասնության պահպանումը, որպեսզի մեր ուժերը չջլատվին, չցրվին և կարողանանք մեր բոլոր հնարավոր միջոցներով առավելագույն չափով և նպատակասլաց կերպով մեր պարտքը կատարել մեր հայրերու Աստուծույն առջև, մեր ժողովուրդին առջև, մեր հայրենիքին առջև, մեր պատմության և մեր ապագային առջև:

Վերջին իղձ մը ևս կուզենք բերել այստեղ. այն է՝ պահպանումը խաղաղության ամենայն աշխարհի: Ամբողջ աշխարհը խաղաղության մասին կխոսի այսօր: Վերջին տարիներուն Հռոմի բարձունքեն ալ սրբազան պապերը ամեն հունվար մեկին ուղերձ մը կուղղեն իրենց եկեղեցիին և համայն մարդկության վասն խաղաղության համայն աշխարհի: Այդ կարգը հաստատեց հանգուցյալ երանաշնորհ Պողոս Զ Պապը, որ Մեր գիտակցության մեջ մեծագույն պապերեն մեկը կհանդիսանա: Այս տարի ալ նորընտիր սրբազան Պապը խաղաղության աքանչելի ուղերձ մը ուղղեց աշխարհին: Նաև ուրիշ եկեղեցիներու պետեր, բոլոր եկեղեցիներու պետերը մեր օրերուն կաղոթեն վասն խաղաղության ամենայն աշխարհի և կգործեն այդ ուղղությամբ: Մեր ժողովուրդը, կկարծենք, խաղաղության և պատերազմի հարցի առնչությամբ շատ ավելի շահագրգռված է, քան ուրիշ ժողովուրդներ, որովհետև անցյալի փորձառությունները մեզի կթելադրեն, որ մեր երկրի սահմաներու շուրջ մշտապես խաղաղություն տիրե, և նոր փորձություններու չենթարկվինք: Այս պատմության շրջանին համար, անհրաժեշտ է, որ մեր մայր երկրի անվտանգությունը, կյանքի ապահովությունը, շինա-

բար հառաջընթացը, որով քայլ առ քայլ կհառաջդիմե ու կծաղկի մեր մայր երկիրը, այս գոյավիճակը չխանգարվի: Կենսական հարցը մեզի համար այդ է այսօր, ուրիշ նույնքան կենսական հարցեր չկան հայ ժողովուրդի համար: Մենք կփափագեինք, որ մեր արտասահմանի եղբայրները ուղիղ և ճիշտ հասկնային այս ճշմարտությունը, որովհետև երբեմն այնքան ալ ուղիղ և ճիշտ չի հասկցվիր, և հիմնական ճշմարտությունները մոռացության կտրվին:

Այո՛, մոռացության կտրվին երբեմն ոմանց կողմե՝ մեր մայր երկրի, Հայաստանի աշխարհագրական-քաղաքական դիրքը և տվյալները, մեր ժողովուրդի կյանքի անվտանգության տեսակետեն: Խաչատուր Աբովյանի և Ներսես Աշտարակեցիի օրերեն մինչև այսօր, մեր երկրի և ժողովուրդի աշխարհագրական--քաղաքական տվյալները չեն փոխված: Այսօր ալ նույնն են և առավել շեշտված, մեծ Եղեռնի անավոր փորձառութենեն հետո: Հետևաբար, ամեն մտածելակերպ, ամեն գործելակերպ, որ կանտեսե այս ճշմարտությունը, դուրս կմնա հայ ժողովուրդի շահերու հունեն, դուրս կմնա հայոց պատմության ծիրեն: Այս իրողությունը կենսական կարևորություն ունեցող պարագա կնկատենք Մենք և հրավեր կկարդանք ձեզի բոլորիդ և բոլորին ի սիյուս աշխարհի, որ մոլորությանց անձնատուր չըլլան:

Պահ մը եղավ, վերջին պատերազմի ընթացքին, երբ հայաստանցի ժողովուրդը զգաց մահվան ուրվականը իր դռան առաջ կանգնած, նոր եղեռնի մը ուրվականը: Այդ այն պահուն էր, երբ ֆոն Պանուլուսի գերմանական հարձակող բանակները Վոլգայի ափին հսկայական ուժեր կեդրոնացուցած՝ ահեղ մարտ կմղեին, իսկ մեր հայրենիքը պաշտպանող ուժերը հերոսաբար կպաշտպանեին իրենց մայր հողը և իրենց ազատությունը, անոնց շարքերուն մեջ նաև բազմահազար հայաստանցիներ: Իսկ Արաքսի մյուս ափին մինչև ակռաները զինված ուրիշ բանակ մը կսպասեր վայրկյան առ վայրկյան, որպեսզի Վոլգայի ափին խորհրդային բանակները պարտվին, և ինք ներխուժե Խորհրդային Միություն, Հայաստանի վրայով: 1945-ին, երբ Մենք առաջին անգամ այցելեցինք Հայաստան իբրև պատգամավոր Ռումանիայեն, օր մը պատահաբար ծանոթացանք երևանցի պարզ մարդու մը, որ խոսեցավ Մեզի այդ մասին: Ան իր ընտանիքեն զոհեր ալ տված էր: Հայաստանցի մարդը հետևյալ պատկերով արտահայտեց իր ըսելիքը՝ «Հա՛յր սուրբ, Հայաստանցի ժողովրդի սիրտը այդ օրերին աշնան տերևի նման դողում էր, որ այնտեղ, Վոլգայի ափին կարող են հաղթական դուրս գալ գերմանացիք: Որովհետև այդ պահին էին սպասում թուրքական բանակները, հարձակվելու համար Հայաստանի վրա և ապա առաջ անցնելու, դեպի Բաքու, նավթահորերը գրավելու համար»: Ահա թե նման պահերուն, ինչպիսի վտանգներու և ողբերգությանց առջև կրնանք գտնվիլ մենք նաև ապագային: Հետևաբար, երկրորդական հարցերը մեկ կողմ. ամեն բանե վեր, հայաստանցի ժողովուրդը իրավունքը և պարտականությունը ունի իր կյանքի ապահովության և իր հայրենիքի անվտանգության մասին մտածելու և զայն ամրապնդելու: Քաղաքական հայտարարություններ չէ, որ կընենք հոս: Մենք քաղաքական մարդ չենք: Այս քաղաքականություն չէ, այլ մեր ամբողջ ժողովուրդի ապրելու և գոյատևելու հարցն է: Մենք՝ հայաստանցիներս, այնտեղ լավ կզգանք այս ճշմարտությունները: Երանի՜ թե արտասահմանի հայությունը, անխտիր, ինք ևս ուղիղ հասկնար այս հիմնական ճշմարտությունը և ժամանակ չկորսնցներ ըսի-ըսավներով ու բամբասանքներով, երբեմն: Արտասահմանի մեր ժողովուրդին համար՝ հայ դատին, հա-

յոց ապագային ծառայելու միակ լավագույն կերպը՝ արդի ապրող ու շնչող Հայաստանը ավելի ու ավելի աճեցնելն ու զորացնելն է, թե՛ իր հայ ազգաբնակչության համրանքով, թե՛ իր գիտական-տնտեսական հզորությամբ և թե՛ իր ազգային մշակույթով, սփյուռքի հայությունը ունենալով իբրև օժանդակ բարոյական ուժ:

Չենք գիտեր, եթե ձեր սպասածի մասին խոսեցանք, բայց Մենք Մեր սիրտը բացինք բարեկամաբար, հայրաբար, առանց ճառ մը խոսած ըլլալու հավակնության: Վստահ ենք, որ ընդհանրապես դուք Մեզ լավ կհասկընաք, ինչպես Մենք ձեզ լավ կհասկնանք: Կրկին անգամ Մեր խորին շնորհակալությունը կհայտնենք սիրո և հարգանքի այն բոլոր արտահայտություններուն համար, որոնք Մեր շուրջ ծաղկեցան: Կմեկնինք ձեզմե, թեև ֆիզիկապես հոգնած, բայց հոգեպես ավելի մխիթարված և ավելի զորացած, ավելի լավատես դարձած: Դուք մեր ժողովուրդի անբաժան մասը կկազմեք, դուք մեր հարազատներն եք: Դուք և Հայաստանի ժողովուրդը Մեր գիտակցության մեջ մեկ ամբողջություն մը կկազմեք մեր եկեղեցիով և սուրբ Էջմիածնով: Թող Աստված միշտ Իր օրհնությունը մեր ազգի վրա տարածյալ պահե և մեր բոլոր ազնիվ, բարի և շինարար իղձերը իրականացնե, որպեսզի մենք ալ ազգովին, այս արևին տակ կարողանանք խաղաղ ապրիլ, հետզհետե ավելի աճիլ, ծաղկիլ, իբրև ժողովուրդ ու հայրենիք, և մեր տեղը գրավել, մեր սեփական տեղը, քաղաքակիրթ աշխարհի, քաղաքակիրթ ժողովուրդներու հառաջընթաց ճանապարհին վրա:

Կեցցե՛ Հայաստանյայց առաքելական եկեղեցին:

Կեցցե՛ հայ ժողովուրդը: